

Jaga Nalbandian (I. Collin) «Bolgesang», digte nm drom og liv. (Ինչա Նալբանդեան (Գոլլին), «Կոհակերգ», բանաստեղծութիւններ երազի և կեանքի վրայ), 1905, Կոպենհագէն:

Խմբագրութեանս ուղարկած այդ գողտրիկ հատորի հեղինակունին դանեմարկունի է, որ իր ճակատագիրը կապել է մի հայ մանկավարժի՝ պ. Մ. Նալբանդեանի հետ: Դոկտոր Մ. Նալբանդեանը Լոզանի հայկական վարժարանի տնօրէնն է, «Գիտութիւն» ամսաթերթի խմբագիրը և մեր աշխատակիցը: Նրա օտարունի ամուսինը առանձին համակրանքով է վերաբերում հայ բանաստեղծական գրականութեան, որից թարգմանօրէն նմուշներ է զետեղել դանիական զանազան թերթերում և հանդէսներում: Դանիական լեզուն անծանօթ լինելով, բնականաբար, մենք անկարող ենք կարծիք յայտնել տիկնոջ բանաստեղծական շնորքի մասին. սակայն, ինչպէս տեղեկացանք, Կոպենհագէնի թերթերում բաւական նպաստաւոր կարծիքներ են յայտնուած նրա ձիրքի մասին: Դանիական հասարակութեան համար առանձնապէս հետաքրքրական են այդ հատորի Armeniske digte բաժինը, որի մէջ զետեղուած են տիկնոջ թարգմութեամբ. «Ո՛վ ինչ անոյշ», «Իմ սիրելի զաւակունքը», «Մայրիկս», «Դու գով խնդրես», «Ազատ Աստուած», «Մայր Արաքսի» և այլ հայկական երգեր:

Որքան մեզ յայտնի է, տիկինը շարունակում է հայ բանաստեղծութիւնների թարգմանութիւնը դանիական այլ և այլ թերթերում: Յանկանում ենք աջողութիւն նրան իր համակրելի և օգտակար ձեռնարկութեան մէջ:

*